ՍԱԼԵԱՆԻՑ՝ Բժիշկ Արամեանից, Իզբաշեանից և Գաբրիէլեանից, (գրած է գրաբար՝ ռուսերէն տառերով)։
ՂԱԶԱԽԻՑ՝ Պ. Ս. Ամիրեանցից։
ՓՕԹԻԻՑ՝ Պ. Աղէքսանդր Զաքարեանից։
ՂՈՒԲԱՑԻՑ՝ Բժիշկ Զալեանից։

ՈՒՂԵՐՁՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ՝ Գնդապետ Իզբաշեանցից։
ԴԵՐԲԵՆԴԻՑ՝ Օր. Եղիսաբէթ Զուարեանից։
ՍԱԼԵԱՆԻՑ՝ Բժիշկ Գաբրիէլ Յովհաննիսեանից։
ԲԱԳՈՒԱՑ՝ Ռէալական դպրոցի ուսուցիչ Азлепкій-ից։
ՇԱՄԱԽՈՒՑ՝ Մակար վարդապետ Բարխուդարեանից, և (Բագուի) Գրիգոր քահանայ Գրիգորեանից։

Բացի դոցանից, ստացուած են և չորս ուսանաւորներ, որոնցից երեքը տեղւոյս ռէալական դպրոցի աշակերտներից են, իսկ մէկը Ենալի համալսարանի ուսանող Արշակ Տէր-Միքէլեանցից։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

Կովկասեան Կառավարչապետն ուղարկել է պ. պ. Նահանգապետներին հետեւեալ շրջաբերականը 1889 թ. Ապրիլի 16-ից № 3716։

Ամենայն Հայոց Կաթուղիկոս Մակարի յարուցած միջնորդութեան համաձայն՝ բացատրելու այն խնդիրները, որոնք վերաբերում են հայ-լուսաւորչական կրօնի դաստաւութեանը պետական ուսումնարանների մէջ, ինչպէս և 1884 թ. փետրարի 16-ին հրատարակուած կանոններին հայ-լուսաւորչական ծխական ուսումնարանների մասին և այդ կանոնները լրացնող բացատրութիւններին, որոնք լայտնուած են Կովկասեան երկրի պ. պ. Նահանգապետներին և գլխաւորներին 31 մարտի 1886 թ. № 3217-ով ուղղած իմ շրջաբերականով, թագաւոր Կայսրը, այդ հարցերի մասին կայացած առանձին խորհրդակցութեան արձանագրութեան ամենահպատակ զեկուցման համաձայն, անցեալ մարտ ամսի 22-ին բարեհաճեց Բարձրագոյն հրամայել.

1) Թոյլատրել, ժամանակաւորապէս, մինչև որ կը կայանալ այդ մասին մի առանձին կարգադրութիւն, Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի, ներքին գործերի մինիստրի և Կովկասեան կառավարչապետի համաձայնութեամբ, հայ-լուսաւորչական դաւանութեան կրօնդիտութեան դասատուութիւնը Կովկասեան ուսումնարանական շրջանի միջնակարգ դպրոցական հաստատութիւնների մէջ՝ հայերէն լեզուով։

2) Հայ-լուսաւորչական եկեղեցական-ծխական ուսումնարանների մէջ ուսուցց լեզուի, Ռուսաստանի աշխարհագրութեան, պատմութեան առարկաների դասատուն պէտք է նշանակուին միայն այն անձինք, որոնք ունին որոշեալ ուսուցչական ցեղ. բայց թոյլատրել Կաթուղիկոսին այդ ուսումնարանների մէջ աւանդուող առարկաների համար ընդունել ուսուցիչ նաև վերոյիշեալ ուսուցչական իրաւունքը չ'ունեցող անձանց, միայն այն պայմանով, որ այդ բացառութիւնը կարող է տեւել մինչև 5 տարի։ Այդ ժամանակամիջոցից յետոյ ուսուցչական իրաւունք չ'ունեցող անձերը ալ ևս չեն ընդունիլ առհասարակ իբրև դասատու այդ ուսումնարանների մէջ։

3) Բացատրել, որ, ընդհանուր կանոնով, եկեղեցական-ծխական դպրոցների ուսուցիչների նշանակումն ու արձակումը կատարւում է անմիջական կարգադրութեամբ հայ-լուսաւորչական հոգևոր իշխանութեան, որ, ի դէմս թեմական առաջնորդների, պարտաւոր է հաղորդել Կովկասեան ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուին ուսուցիչների անձնական կազմակերպութեան մէջ եղած բոլոր փոփոխութիւնների մասին։ Եթէ հարկաւորուի հեռացնել եկեղեցական-ծխական դպրոցներից այն ուսուցիչներին և ուսուցչուհիներին, որոնք իրանց գիտութիւնով և ուրիշ մանկավարժական լատկութիւններով կամ վարքով չեն համապատասխանում իրանց ստանձնած պարտաւորութեանը, այն ժամանակ Կովկասեան ուսումնարական շրջանի հոգաբարձուն նախապէս այդ մասին դիմում է տեղական հայ-լուսաւորչական թեմական առաջնորդին։ Եւ եթէ այդ մասին համաձայնութիւն չը կայանալ հոգաբարձուի և առաջնորդի մէջ, այն ժամանակ հոգաբարձուն պարտաւոր է անմիջապէս զեկուցանել Կովկասի կառավարչապետին, որ յարաբերութեան մէջ է մտնում այդ առիթով Կաթուղիկոսի հետ, յետոյ ձեռք է առնում, ըստ իւր հայեցողութեան, համապատասխան միջոցներ։

Այդ կանոնը միակերպ տարածւում է և թեմական տեսուչների վերայ։

4) Յույց տալ Բարձրագոյն Պատրիարքին, որ Հայաստանի պատմութեան և աշխարհագրութեան առանձին դասատուութիւնը պէտք է հանուի հայ եկեղեցական-ծխական դպրոցներում աւանդուող առարկաների շարքից, իբրև օրէնքով չը թոյլատրուած առարկայ։ Ընդ սմին նորա անմիջական կատարման հսկողութիւնը յանձնել մերձաւոր ուսումնարանական իշխանութեան։

Այդ վերոգրեալ Բարձրագոյն հրամանի մասին առաջարկւած է ի կատարումն և ի զեկավարութիւն թէ ուսումնարանական շրջանին և թէ Նորին Սրբութեան Մակար Կաթուղիկոսին։

ԱՐՁԱՆ ՊԵՏՐՈՍ ՇԱՆՇԵԱՆՑԻՆ

Մեզ խնդրում են տպագրել հետևեալը.

Հանգուցեալ Պետրոս Շանշեանցին լարգողների մի խումբ, ցանկալով լաւէրժացնել նորա միշատակը, իբրև հասարակութեան մի ընտիր ու ազնիւ գործիչի և ճշմարիտ քրիստոնէի կատարեալ տիպարը իւր մէջ մարմնացնող մի անհատի՝ ընտրել է իւր միջից մի մասնաժողով, որ հոգալու է այս նպատակի իրագործման համար—մահարձան կանգնեցնելով նորա շիրմի վերայ և կենսագրութիւնը նորա կենդանագրով հրատարակելով. Հարկաւոր ծախքերը ծածկելու համար մտադրութիւն կայ ժողովարարութեան դիմելու թէ Տփխիսում և թէ դաւառներում. ցանկալի էր, որ հայ հասարակութիւնը չը զլանար իւր նպաստը այնպիսի մի անզուգական հայի և քրիստոնէի միշատակի լաւէրժացնելու ձեռնարկութեանը՝ իւր աջակցութեամբ և առատաձեռնութեամբ։

Մասնաժողովի նախագահ ընտրուած է պ. Մարկոս Դոլուխանեան, անդամներ՝ արժանապատիւ հարք—տէր-Արսէն Բագրատունի և տէր-Սահակ Սահակեանց և պ. պ. բժշկապետ Մալսուրեանց, Յակոբ Տիգրանեանց և Բագրատ Միրիմանեանց։

Յարգելի ժողովարարներին խնդրում է հանգանակուած գումարները ուղարկելու Տփխիսի հայ լրագրութեանց խմբագիրներին և կամ մասնաժողովի գանձապահ պ. Յակոբ Տիգրանեանցին՝ Տփխիսի քաղաքային վարչութեան հասցէով։

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑԻ 30-ԱՄԵԱՅ ՅՕԲԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Վիպասան պ. Պերճ Պռօշեանցի տաղանդը և երկարամեայ գործունէութիւնը լարգողներին կարող ենք լայտարարել, որ նշանաւոր վիպասանի և գործիչի 30-ամեայ յօբելեանը արժանաւոր կերպով տօնելու համար նախապատրաստութիւնները տեսնում են։ Պ. Պռօշեանցին լարգողների մի խումբ, այս լունիսի 8-ին, հաւաքուեց պ. Դէորգ Զմշկեանի մօտ՝ այդ խնդրի մասին խորհրդակցելու և վճռեց կազմել կարգադրիչ մասնաժողով, որի անդամներ խնդրուած են լինելու՝

պ. պ. Սունդուկեանց Գաբրիէլ
Զմշկեան Դէորգ
Երիցեան Ալէքսանդր
Տիգրանեան Յակոբ
Եզեկեան Աւետիք
Սարգսեան Լեոն
Ենգիբարեան Գարեգին